

## ՊՕՇՏԱՆԻ ԱՄԻՐԱՆ

ՊԷՏԻՐ ԽԱՆ ՊԷՅԻ ՔՐԴԱ - ՀԱՅԿԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ

(Օսմ. բանակի արեալագիր. Հայ ժողովրդի բանակին մասնակցութիւնը. Քիւրդական իշխանութեան կործանումը.)

Պօտանի մէջ աննկատելի կերպով 1846 թուին կը զօրանար Պէտիրխան պէյը իր սպայերու աւանդական իշխանութիւնը հիմնելու համար: Բայ իր հպատակներէն, ունէր բազմաթիւ կլին ու քառասուն որդիներ. (իր յաղթութիւն տարած ամեն մի տեղէն մի կլին կ'առնէր): Սա իր պատերազմները կ'սկսի նախ իր չրջանի փոքրիկ փոքրիկ Տէրէպէյիներու հետ, ու աւստնց յաղթելով կ'ընդարձակէ իր իշխանութեան ծաւալը (\*): Այս գծին կը հանդիպի նաև Մոկաին իշխող Տէրէպէյի Ապտալ պէյը՝ որ իր ձեռքին տակ ունէր հռչակաւոր բերդեր: Պատերազմը Ապտալ պէյի հետ բուռն կը լինի և կ'ստանայ չարունակական բնաւորութիւն, և երբ յաղթութիւնն ու սպարտութիւնը երկու կողմի համար ալ անորոշ կը դառնայ, փոխադարձ զիջումներով խաղաղութեան դաշինք կը կնքեն, և Պէտիրխան պէյը կու գայ չրջելու Մոկաց բերդերը:

Նա կը զարմանայ այդ շէնքերու ամուր կառուցուածքին, պատերազմական անվիճելի յարմարութիւններ ընծայելու դիրքին, ամրութեանը, ու այն գաղանի նրբանցքներուն՝ որ հայկական հին ճարտարագիտութեան ու մտածումների արդիւնք էին և որոնք այժմ ժառանգութիւն ինկած էին Քիւրդ Ապտալ պէյին:

Ինչպէս տեղական ժողովուրդները կը պատմեն, այս Տէրէպէյիները ցեղական մեծ ծագում չունին, և այդ ծագումնային ազդեցութեամբ չէ այնչափ որ կը պատրաստեն իրենց աւազակային մեծութիւնը: Այն ամեն Քիւրդը որ իր մէջ ուժ կը զգայ ստակալի ասպատակ մը դառնալու, ա՛ն ու սարսափ